

ամեն մարդու հասարակ գինուորին՝ նաեւ օտարականին մտաւոր եւ մարմնաւոր զօրութիւնը չեն արհամարհեր՝ կը վարձատրեն, փառաց եւ մեծութեան կը հասցնեն. իսկ սոքա նախատինք կը համարին անձանց, ո՛չ իբրեւ հաւասարի՝ այլ իբրեւ մարդու վրայ նայիլ՝ ժողովրդեան մէջէն ելած մարդուն վրայ, որ խելք եւ յաջողակութիւն ցոյց կ'ուտայ, եւ զանի ոտնակոխ ընել, ոչինչ դարձնել իրենց պարտքը կը համարին: Չեն տեսներ յիմարները, որ մեր Հայաստանեայց եկեղեցին եթէ այսչափ հաւածանաց կը դիմանայ, այսչափ ներքին եւ արտաքին բռնութեանց կը տանի այն պատճառաւ միայն անկործան կը մնա, որ անխտիր մտաւոր կարողութեանց իր դմները բացեր յետին ողորմելի գիւղացին, շինականը, անազատը կառնու իւր ծոցը, կը սնուցանէ, կը մեծցնէ եւ կաթողիկոսական գահոպից վրայ նաեւ կը բարձրացնէք

– Բայց այդ Յովնան կը ճանչեմ ըսիր, Տիկին, ուրեմն երեւելի մարդ է:

– Եթէ իւր զգեստներն նկատենք, եթէ իւր ազգային անունը նկատենք, եթէ իւր հարստութիւնն ու կալուածները նկատենք՝ ամենաոչինչ մարդ է. իսկ եւ եթէ իբրեւ բաջ եւ խելօք մարդ նկատենք՝ մեր բոլոր իշխաններուն՝ ոչ Վասպուրականի համար կ'ըսեմ, այլ բոլոր Հայաստանի իշխաններու մէջ տասն հոգի չեմ գտներ նորա հետ բաղդատելու համար:

– Բայց ինչպե՞ս կարելի է Արծրունեաց Տիկնոջը այսպէս լաւ ճանչել յետին շինական մը. գիս այդ կը զարմացնէ:

– Ես երբ զինք ճանչեցի Արծրունեաց Տիկին չէի՝ այլ Բագ րատունեաց Օրիորդ: Հօրեղբօրս պալատն ի Տարօն այդ տղան կը տեսնէի. տարեկից իշխանագուններուն հետ կը խաղար, կիյներ, կ'ելներ յաջողակ, զօրաւոր, առաջին ամեն մարմնաւոր կրթութեան եւ մարզերու մէջ: Նոյնպէս մտաւոր կարողութեան կողմանէ կը զարմացներ նաեւ այն վարդապետը, որ վարժապետելու եւ ատենադպրութեան պաշտօն ունէր հօրեղբօրս քով: Եւ այն աստիճանի իւր յաջողակութիւնը յայտնի էր ամենուն, որ դեռ 15-16 տա րեկան, ունկիցէ դժուար պարագայի իրեն կը դիմեր ամեն մարդ:—